ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 5–ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ

Կոնվենցիաների հաշվետվություններ ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Դեկտեմբեր 2015

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 5–ՐԴ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ

Կոնվենցիաների հաշվետվություններ ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Էջ |
|---|---|
| ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 3-4 |
| ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ | |
| Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն | 5 |
| Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն | 6 |
| Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 7-11 |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲԾԻԳ ՊՀ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ | 12 |

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N101

*"Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայումը և Կոնվենցիային ներկայացվելիք Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5–րդ ազգային հաշվետվության կազմումը" ծրագրի 2013թ. մարտիի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության Նախարարության «Բնապահպանական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» Պետական Հիմնարկի (ԲԾԻԳ ՊՀ) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող և ԲԾԻԳ ՊՀ կողմից իրականացվող "Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայումը և Կոնվենցիային ներկայացվելիք Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5–րդ ազգային հաշվետվության կազմումը" ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների համար*

ԲԾԻԳ ՊՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց): Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք ՀՄԴ-ի Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված հատուկ նպատակների .ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:
Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, և Համաշխարհային բանկի ուղեցույցի:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2013թ. մարտի 14-ին կնքված ԳԷՀ No. TF013529 դրամաշնորհային համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համաձայն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն 2013թ. մարտի 14-ին կնքված ԳԷՀ No. TF013529 դրամաշնորհային համաձայնագրի:
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն 2013թ. մարտի 14-ին կնքված ԳԷՀ No. TF013529 դրամաշնորհային համաձայնագրի պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին:

*Հանգամանքների լուսաբանում*

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 9-ին, որը բացահայտում է այն փաստը, որ ծրագիրը ավարտվել է հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
25 դեկտեմբերի, 2015թ.

Սամվել Ղազարյան
Տնօրեն

Նազիկ Չիքչյան
Աուդիտոր



ՀՀ, ք. Երևան, 0037, Ա.Տիգրանյան 38-55, Հեռ. (+37410) 20 11 51, Ֆաքս (+37410) 20 11 50, www.sosaudit.am, էլ-փոստ info@sosaudit.am
An Associate of the Crowe Horwath Business Alliance
38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA, Tel.: (+37410) 20 11 51, Fax: (+37410) 20 11 50, www.sosaudit.am, E-mail: info@sosaudit.am

Ազգային Կենսաբազմազանության Ռազմավարության և Գործողությունների Ծրագրի Վերանայումը և Կոնվենցիային Ներկայացվելիք Հայաստանում Կենսաբանական Բազմազանության Մասին 5-րդ Ազգային Հաշվետվության Կազմումը
ԳԷՅ Դրամաշնորհ No. TF013529

**Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն**
2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| | | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 3.12.2015 | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 3.12.2015 | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 3.12.2015 | |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | | | | | | | | |
| | | | | | | | | |
| Ֆոնդերի աղբյուրները | | | | | | | | |
| ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529 | 8.1 | 242,000.00 | 242,000.00 | 242,000.00 | 242,000.00 | - | - | 242,000.00 |
| Ընդամենը | | | | | | | | |
| | | | | | | | | |
| Ֆոնդերի օգտագործում | 7 | | | | | | | |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ աուդիտը), հանդիպումներ, ուսուցում, սեմինարներ և գործառնական ծախսեր | | 230,129.26 | 230,129.26 | 242,000.00 | 242,000.00 | (11,870.74) | (11,870.74) | 242,000.00 |
| Ընդամենը ծրագրային ծախսեր | | 230,129.26 | 230,129.26 | 242,000.00 | 242,000.00 | (11,870.74) | (11,870.74) | 242,000.00 |
| | | | | | | | | |
| Դրամական միջոցների վերջնական մնացորդ | 6 | 11,870.74 | 11,870.74 | | | | | |

**Գրիշա Հովհաննիսյան**
ԲԾԻԳ ՊՀ-ի Տնօրեն

**Հակոբ Հակոբյան**
ԲԾԻԳ ՊՀ-ի Գլխավոր հաշվապահ

25 Դեկտեմբերի 2015

Ծանոթագրությունների 7-11 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ազգային Կենսաբազմազանության Ռազմավարության և Գործողությունների Ծրագրի Վերանայումը և Կոնվենցիային Ներկայացվելիք Հայաստանում Կենսաբանական Բազմազանության Մասին 5-րդ Ազգային Հաշվետվության Կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529

**Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն**
2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 03.12.2015 | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 03.12.2015 | հաշվետու ժամանակաշրջան | Անողական առ 03.12.2015 | |
| I. Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայումը և ՍԱԿԲԿ-ին ներկայացվելիք 5–րդ ազգային զեկույցի կազմում | 230,129.26 | 230,129.26 | 242,000.00 | 242,000.00 | (11,870.74) | (11,870.74) | 242,000.00 |
| Ընդամենը ծրագրային ծախսեր | 230,129.26 | 230,129.26 | 242,000.00 | 242,000.00 | (11,870.74) | (11,870.74) | 242,000.00 |

Ազգային Կենսաբազմազանության Ռազմավարության և Գործողությունների Ծրագրի Վերանայումը և Կոնվենցիային Ներկայացվելիք Հայաստանում Կենսաբանական Բազմազանության Մասին 5-րդ Ազգային Հաշվետվության Կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### *1.1. Ծրագիր*

2013թ. մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև ստորագրվել է No. TF013529 դրամաշնորհային համաձայնագիրը, համաձայն որի ՎԶՄԲ-ն Համաշխարհային Բանկի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 242,000 ԱՄՆ դոլարը չգերազանցող դրամաշնորհ՝ ԻԶՀ No. TF013529 դրամաշնորհը:

Դրամաշնորհը տրամադրվել է "Ազգային Կենսաբազմազանության Ռազմավարության և Գործողությունների Ծրագրի Վերանայումը և Կոնվենցիային Ներկայացվելիք Հայաստանում Կենսաբանական Բազմազանության Մասին 5–րդ Ազգային Հաշվետվության Կազմումը" Ծրագրի (Ծրագիր) իրականացման նպատակով:

ԳԷՀ No. TF013658 դրամաշնորհի կողմից ֆինանսավորման վերջնաժամկետ է սահմանվել 2015թ. սեպտեմբերի 14-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

### *1.2. Ծրագրի նպատակը*

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը.
ա) Կենսաբազմազանության Կոնվենցիայի (ԿԲԿ) 26–րդ հոդվածին համապատասխան կազմել հաշվետվություն,
բ) ԿԲԿ 6–րդ հոդվածին համապատասխան վերանայել ազգային ռազմավարությունը, ծրագրերը և գործողությունները,
գ) Կազմավորել հաշվանցման կենտրոն:

### *1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում*

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհ - 100% (ներառյալ հարկերը)

| Կատեգորիա | ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհ | Ընդամենը |
|---|---|---|
| | USD | USD |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ աուդիտը), հանդիպումներ, ուսուցում, սեմինարներ և գործառնական ծախսեր | 242,000.00 | 242,000.00 |

### *1.4. Ծրագրի իրականացում*

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության Նախարարության "Բնապահպանական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ" Պետական Հիմնարկի կողմից (ԲԾԻԳ ՊՀ)
ԲԾԻԳ ՊՀ հասցեն է՝ Արմենակյան փողոց 129, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկին՝ «RM 3-Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ին (մարտ, 2010) համապատասխան:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք*

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):
Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) վճարված ծախսերը ներկայացվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանած փոխարժեքով:

2015թ. դեկտեմբերի 3-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 484.59 դրամ:

### *2.4. Հարկեր*

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

## 3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE և SUMMARY SHEET)

| Դիմումի համարը | Դիմումի հաստատման ամսաթիվը | Ծախսային հոդված<br>1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ աուդիտը), հանդիպումներ, ուսուցում, սեմինարներ և գործառնական ծախսեր<br>*ԱՄՆ դոլար* |
|---|---|---|
| 2DA | 09.09.2014 | 45,774.92 |
| 3DA | 02.03.2015 | 81,454.73 |
| 4DA | 16.10.2015 | 102,165.67 |
| 5DA | 02.12.2015 | 733.94 |
| Ընդամենը | | 230,129.26 |

## 4. Նպատակային հաշվի հաշվետվություն

| | |
|---|---|
| Հաշվարկային հաշիվ | 900000927021 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Տիգրան Մեծ 4, 1-ին հարկ, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն |
| Արժույթը | ԱՄՆ դոլար |

| | ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհի<br>2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ը |
|---|---|
| 1. Սկզբնական մնացորդ 14.03.2013 դրությամբ | - |
| 2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն | - |
| 3. ՎԶՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում | 242,000.00 |
| 4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՎԶՄԲ -ին | - |
| **5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը** | **242,000.00** |
| 6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդ 03.12.2015 դրությամբ | 11,870.74 |
| 7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար | 230,129.26 |
| 8. Նվազեցում. ստացված տոկոսներ | - |
| **9. Ընդամենը հաշվառված համալրում** | **242,000.00** |
| 10. Տարբերություն (5)-(9) | - |

## 5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

| | | 03.12.2015<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| Դրամական միջոցներ | 6 | 11,870.74 |
| Կանխավճարներ | | - |
| **Ընդամենը ակտիվներ** | | 11,870.74 |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Կրեդիտորական պարտավորություններ | | - |
| **Ընդամենը պարտավորություններ** | | - |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| **Անռղական մուտքեր** | | |
| ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհ | 8.1 | 242,000.00 |
| | | 242,000.00 |
| **Անռղական ծախսումներ** | | |
| Ծրագրի ծախսումներ | | (230,579.68) |
| | | (230,579.68) |
| Արտարժույթի փոխարժեքային օգուտ | | 450.42 |
| **Ընդամենը զուտ ակտիվներ** | | 11,870.74 |

## 6. Դրամական միջոցներ

| | Բանկ | Արժույթը | 03.12.2015<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Նպատակային հաշիվ (ԳԷՀ No. TF013529 Դրամաշնորհ) | Գանձապետարան | ԱՄՆ դոլար | 11,870.74 |
| Ընդամենը | | | 11,870.74 |

## 7. Ծրագրային ծախսեր

*Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում*

| Ծախսային հոդված | Անողական ծախսումներ 3 դեկտեմբերի 2015թ. դրությամբ | Ընդամենը բյուջե | Կատարում |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | % |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ աուդիտը), հանդիպումներ, ուսուցում, սեմինարներ և գործառնական ծախսեր | 230,129.26 | 242,000.00 | 95% |
| Ընդամենը | 230,129.26 | 242,000.00 | 95% |

## 8. Ֆինանսավորում

*8.1. Դրամաշնորհ ԳԷՀ No. TF013529*

| | հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար | Անողական առ 03.12.2015 ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Կանխավճար / (մարում) | 11,870.74 | 11,870.74 |
| SOE և Summary Report | 230,129.26 | 230,129.26 |
| Ընդամենը | 242,000.00 | 242,000.00 |
| Ընդամենը բյուջե | | 242,000.00 |
| Առ 03.12.2015 տրամադրված ֆինանսավորում % | | 100% |

## 9. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2015թ. սեպտեմբերի 14-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2015թ. դեկտեմբեր 3-ին (Հաշվետվության ամսաթիվ):
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ.

ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր չեն կատարվել; արտոնյալ ժամանակահատվածում վճարումները վերաբերում են մինչև Ավարտման ամսաթիվը կատարված ծախսերին,
բ. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո ԳԷՀ No.TF013529 դրամաշնորհի գծով առհանումներ չեն կատարվել,
գ. Հաշվետու ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,
դ. Հաշվետու ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առնչվող կանխավճարների մնացորդներ կամ չմարված կրեդիտորական պարտավորություններ,
ե. Հաշվետու ամսաթվին դրամական միջոցների մնացորդը իրենից ներկայացնում Նպատակային հաշվի 11,870.74 ԱՄՆ դոլար մնացորդը, որի մնացած մասը վերջնական աուդիտի ծառայության համար վճարելուց հետո, կփոխանցվի ՀԲ-ին,
զ. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

Ազգային Կենսաբազմազանության Ռազմավարության և Գործողությունների Ծրագրի Վերանայումը և Կոնվենցիային Ներկայացվելիք Հայաստանում Կենսաբանական Բազմազանության Մասին 5-րդ Ազգային Հաշվետվության Կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013529

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲԾԻԳ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ
2013թ. մարտի 14-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
*(ԱՄՆ դոլար)*

| Ծախսային հոդված | Դիմում | ԲԾԻԳ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Կանխավճար | 1A | 90,000.00 | 90,000.00 | |
| | 2DA | 55,000.00 | 55,000.00 | |
| | 3DA | | (30,229.65) | |
| | 4DA | | (102,165.67) | |
| | 5DA | | (733.94) | |
| | | **145,000.00** | **11,870.74** | |
| 1. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ աուդիտը), հանդիպումներ, ուսուցում, սեմինարներ և գործառնական ծախսեր | 2DA | 45,774.92 | 45,774.92 | - |
| | 3DA | 81,454.73 | 81,454.73 | - |
| | 4DA | 102,165.67 | 102,165.67 | - |
| | 5DA | 733.94 | 733.94 | - |
| | | **230,129.26** | **230,129.26** | |
| Ընդամենը | | 375,129.26 | 242,000.00 | |